

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2013 - 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ)

Հաշվետու ժամանակահատվածում երեխաների իրավունքների պաշտպանության իրականացման ընթացքում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հաշվառման, կարիքների գնահատման, նրանց անհատական վերականգնողական ծրագրերի մշակման, <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ փոխանցման և առկա իրավիճակի վերլուծության արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

- Հաշվառվել են առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ 5 երեխաներ
- ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող 1 անձ
- Հաշվառումից հանվել են 3 ԱԾԽՄ երեխաներ և ԱԾԽՄ թվին պատկանող 3 անձինք
- Հաշվառվել են մուրացիկ, թափառաշրջիկ, *հրավախախար*, հանցագործություն կատարած 19 և հաշվառումից հանվել են 18 իրավախախտ անչափահասներ
- Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն են տեղավորվել 8 և դուրս են գրվել 11 երեխաներ
- Մանկատուն են տեղավորվել 2 երեխաներ և դուրս է գրվել 1 երեխա
- Վկայագրվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 51 երեխաներ
- Խնամատար ընտանիքում խնամվում են 2 երեխաներ
- Հաշվառվել են երեխա որդեգրել ցանկացող 7 թեկնածուներ
- Հաշվառվել են որդեգրման ենթակա 5 երեխաներ և հաշվառումից հանվել՝ 2 երեխաներ:

Այս պահին Կոտայքի մարզի ԱԾԽՄ երեխաների և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 70 ԱԾԽՄ երեխաներ և 35 ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձինք, որոնցից **հունվար-հուլիս ամիսներին հաշվառվել են 6** և սահմանված տարիքը լրանալու և այլ /մահվան, կենսաբանական ընտանիք վերադառնալու/ պատճառներով 3 ԱԾԽՄ երեխա և 3 ԱԾԽՄ թվին պատկանող անձինք հաշվառումից հանվել են:

Մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում ուսուցանողական ԱԳ բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա հունվար-հուլիս ամիսներին հաշվառվել են 19 անչափահաս, հաշվառումից հանվել՝ 18: Հանցագործության միտվածության կանխարգելման աշխատանքների արդյունքում, եթե 2013թ. հաշվառված էր 30 անչափահաս, իսկ այժմ հաշվառված է 18 իրավախախտ անչափահաս, հետևաբար, 2013թ. համեմատությամբ **12-ով կամ 46%-ով նվազել է** հաշվառված իրավախախտ անչափահասների թիվը:

Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման և հատուկ կարիքի գնահատման առումով: Այժմ վկայագրված են մարզի **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 560 երեխաներ**, նրանցից **51-ը վկայագրվել են 2014թ. ընթացքում:**

Համագործակցելով երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների մասնագետների հետ՝ մարզում իրականացվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական կարիքների գնահատման, երեխաների սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնողական ծրագրերի կազմման և իրականացման աշխատանքներ: 2014թ. <<Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ են տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքների **8 երեխաներ**, որոնց կարիքի գնահատման նպատակով կատարվել են տունայցեր, տրվել են համապատասխան եզրակացություններ և կազմվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր, իսկ **11 երեխաներ** ծնողների դիմումների հիման վրա **դուրս են գրվել** հաստատություններից:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ 2011-2014թթ. ընթացքում մուտքագրվել են **485** երեխաների և երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների տվյալներ, որից **46`** այս տարվա ընթացքում:

ՀՀ Կոտայքի մարզպետի և աշխատակազմի ղեկավարի կողմից, եթե 2013թ. հունվար –հուլիս ամիսների ընթացքում բաժնի գործառույթներին վերաբերող **252** գրություն և դիմում էր մակագրվել, ապա 2014թ. հունվար-հուլիս ամիսների ընթացքում` **458** գրություն և դիմում հանձնարարականներով, որոնց սահմանված կարգով ընթացք է տրվել:

21.08.2014թ.